Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. մայիսի 5-ի թիվ 125-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բովանդակություն

Ներածական մաս 3 - 4 էջեր

Ամփոփագիր 4 էջ

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները 5 - 7 էջեր

Արձանագրված այլ փաստեր 7 - 14 էջեր

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 36-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշներ	ՀՀ կառավարության 30.12.20202թ. «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2022 թվականի փետրվարի 14-ից մինչև ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

2021 թվականի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի ճշտված պլանով նախատեսվել է 34,792,346.2 հազ. դրամ, ֆինանսավորվել է 33,643,179.3 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 33,484,867.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.2 %-ը: Ծրագրի միջոցառումները ութն են:

Պետական բյուջեի կատարման ինն ամիսների հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ բացառությամբ «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառման համար սահմանված արդյունքի չափորոշիչի, մնացած միջոցառումների համար սահմանված ինն ամիսների արդյունքի չափորոշիչների ցուցանիշները թերակատարվել են: Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչների 2021 թվականի տարեկան կատարողականը: Տարվա կտրվածքով ծրագրային միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշները ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հիմնականում կատարվել են: Բացառություն է կազմել «Սահմանապահ զորքերի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման համար սահմանված արդյունքի չափորոշիչը՝ «վերանորոգվող օբյեկտների ընդհանուր մակերես», որը թերակատարվել է 71.3 %-ով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2021 թվականի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի ճշտված պլանով նախատեսվել է 34,792,346.2 հազ. դրամ, ֆինանսավորվել է 33,643,179.3 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2021 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրով

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում	23,398,466.2	23,179,351.6	23,021,040.3	22,256,205.6
Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում	26,793.2	21,959.2	21,959.2	21,604.5
ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ	14,000.0	-	-	-
Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր	8,869,356.0	8,219,356.0	8,219,356.0	8,219,356.0
Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում	1,172,420.0	1,034,807.9	1,034,807.9	941,362.5
Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում	311,903.2	306,039.6	306,039.6	306,039.6
Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում	853,260.0	839,710.0	839,710.0	772,810.0
Սահմանապահ զորքերի շենքային ապահովվածության բարելավում	146,147.6	41,955.0	41,955.0	41,955.0
Ընդամենը	34,792,346.2	33,643,179.3	33,484,867.9	32,559,333.1

«Ազգային անվտանգություն» ծրագրով 2021 թվականի ֆինանսավորումը կազմել է ճշտված պլանի 96.7 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 33,484,867.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.2 %-ը: Ծրագրի միջոցառումների համար նախատեսվել են արդյունքի (կատարողական) ինը չափորոշիչներ՝ ձեռք բերվող

դեղերի անվանատեսակ, քանակ, համակարգչային սարքավորումների քանակ, գրասենյակային գույքի միավոր քանակ, ծառայության ժամկետ, այլ սարքավորումների քանակ, նախագծահետազոտական փաստաթղթերի թիվ, կառուցվող և վերանորոգվող շերքերի ընդհանուր մակերես, տրանսպորտային սարքավորումների քանակ: Ծրագրի միջոցառումները ութն են.

- «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 23,398,466.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 23,179,351.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 23,021,040.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.4 %-ը:
- «Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում» միջոցառման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 26,793.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 21,959.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.0 %-ը: Միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականի համար կնքել է թվով 55 պայմանագրեր՝ 22,090.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել:
- «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 8,869,356.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 8,219,356.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 92.7 %-ը:
- «Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել

է 1,172,420.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 1,034,807.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 88.3 %-ը: Միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականի համար կնքել է 24 պայմանագրեր՝ 1,168,171.3 հազ. դրամ արժեքով:

- «Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 311,903.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 306,039.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.1 %-ը: Միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականի համար կնքել է թվով 33 պայմանագրեր՝ 306,199.5 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 853,260.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 839,710.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.4 %-ը: Միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականին տրանսպորտային միջոցների գնման համար կնքել է 12 պայմանագրեր՝ 839,710.0 հազ. դրամ արժեքով:
- «Սահմանապահ զորքերի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 146,147.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 41,955.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 28.7 %-ը: Միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականին կնքել է մեկ պայմանագիր՝ 139,850.0 հազ. դրամ արժեքով:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության նվազագույն

ծածկույթը ապահովելու համար պլանավորվել և հաշվեքննությամբ ընդգրկվել են պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը.

1. «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր:
2. «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման շրջանակում կատարված ծախսեր:
3. «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կնքված երեք պայմանագրերով 2021 թվականին կատարված ծախսեր՝ 385,696.0 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի ու վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» բյուջետային ծրագրային միջոցառումով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 83 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ազգային անվտանգության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	0	1
Ավագ խումբ	15	15
Միջին խումբ	26	26
Կրտսեր խումբ	35	35
Պայմանագրային զինծառայողներ	2	2
Զինվորական կոչում չունեցող	4	4
Ընդամենը	82	83

Ընտրված աշխատողների 2021 թվականի 12 ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 710-Ն՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության եվ փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը եվ վճարման կարգը սահմանելու մասին» որոշման և ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն՝ «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» որոշման պահանջներին համապատասխան:

2021 թվականի պետական բյուջեի «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը նախատեսվել էր հատկացնել 14,000.0 հազ. դրամ: Միջոցառման կատարման համար

ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ միջև կնքվել է թիվ 11/23-2021 պայմանագիր՝ 14,000.0 հազ. դրամ արժեքով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ կնքված պայմանագրի շրջանակում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ծառայություններ չեն մատուցվել և վճարում չի կատարվել:

2021 թվականի ՀՀ պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայութունը կնքել է 3,522,568.6 հազ. դրամի թվով 417 պայմանագրեր: Պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կնքված հետևյալ պայմանագրերը (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ազգային անվտանգության ծառայության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Տարեկան վճարում
Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում			
Ռեդի Սթեդի ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԾՁԲ-21/2/1	399,925.6	349,942.3
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/5	27,979.7	27,860.6
Ցիկլոիդ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ/9	8,078.0	7,893.1
Ընդամենը		435,983.3	385,696.0

Արձանագրվել է.

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ միջև կնքվել է սննդի պատրաստման ծառայությունների մատուցման համար թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԾՁԲ-21/2/1 պայմանագիր՝ 399,925.6 հազ. դրամ արժեքով: Տարվա ընթացքում համաձայն հանձնման ընդունման արձանագրությունների

մատուցվել է 349,942.3 հազ. դրամի սննդի պատրաստման ծառայություններ, որի չափով ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կատարել է վճարում:

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքված 27,979.7 հազ. դրամի թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/5 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 25,939.7 հազ. դրամի տարբեր տեսակի հանդերձանք: Այդ ժամանակահատվածում ընկերության կողմից մատակարարվել է 15,455.1 հազ. դրամի հանդերձանք, կամ 10,484.6 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա էր հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ: Գնման ժամանակացույցով պակաս մատակարարված 10,484.6 հազ. դրամի հանդերձանքը մատակարարվել է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, որի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հաշվարկել և գանձել է մատակարարից 70.7 հազ. դրամ ուշացված օրերի տույժ: 2021 թվականի երրորդ եռամսյակի համար պայմանագրով նախատեսված 2,040.0 հազ. դրամի հանդերձանքը ևս մատակարարվել է ուշացումով, որի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հաշվարկել և գանձել է մատակարարից 48.4 հազ. դրամ ուշացված օրերի տույժ:
- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Ցիկլոիդ» ՍՊԸ միջև կնքված 17,650.0 հազ. դրամի թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ/9 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 11,575.0 հազ. դրամի տարբեր տեսակի սննդամթերք: Այդ ժամանակահատվածում ընկերության կողմից չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 11,120.0 հազ. դրամ արժեքով 4000 կգ կարագը: Պայմանագրի շրջանակում 5,560.0 հազ. դրամի 2000 կգ կարագը փաստացի մատակարարվել է 2021 թվականի հուլիսին, իսկ մնացած 5,560.0 հազ. դրամի 2000 կգ կարագը սեպտեմբերի 30-ի դրությամբ չի մատակարարվել, որի համար ենթակա էր հաշվարկել և գանձել պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա

համար չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով: ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Ցիկլոիդ» ՍՊԸ միջև կնքված պայմանագրում 2021 թվականի դեկտեմբերի 10-ին թիվ 3 համաձայնագրով կատարվել է փոփոխություն՝ մատակարարման ենթակա 2000 կգ 82.5% յուղայնությամբ սերուցքային կարագից նվազեցվել է 1400 կգ, և պայմանագրի գինը սահմանվել է 8,198.0 հազ. դրամ: Կարագը մատակարարվել է ուշացումով, որի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հաշվարկել և գանձել է մատակարարից 184.9 հազ. դրամ ուշացված օրերի տույժ:

Պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել էր «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշների ինն ամիսների կատարողականը: Կատարողականի վերլուծությունը ցույց էր տվել, որ բացառությամբ «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառման համար սահմանված արդյունքի չափորոշիչի, մնացած միջոցառումների համար սահմանված ինն ամիսների արդյունքի չափորոշիչների ցուցանիշները թերակատարվել են: Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչների 2021 թվականի տարեկան կատարողականը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

«Ազգային անվտանգություն» ծրագրի արդյունքի չափորոշիչների 2021 թվականի կատարողականը

Արդյունքի չափորոշիչ	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարողական (%)
Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում			
ձեռքբերված դեղերի անվանատեսակ, քանակ	379	349	92.1
Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում			
համակարգչային սարքավորումների քանակ, հատ	358	358	100.0
գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	3210	3203	99.8
այլ սարքավորումների քանակ, հատ	413	413	100.0

համակարգչային սարքավորումների ծառայության կանխատեսվող ժամկետ, տարի	5	5	100.0
Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում			
նախագծահետազոտական փաստաթղթերի թիվը, հատ	13	13	100.0
Կառուցվող շենքերի և շինությունների ընդհանուր մակերես, քմ	16777.3	14716.8	87.7
Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում			
տրանսպորտային սարքավորումների քանակ, հատ	21	21	100.0
Սահմանապահ զորքերի շենքային ապահովվածության բարելավում			
վերանորոգվող օբյեկտների ընդհանուր մակերես, քմ	28.62	8.22	28.7

Տարվա կտրվածքով ծրագրային միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշները ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հիմնականում կատարվել են: Բացառություն է կազմել «Սահմանապահ զորքերի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման համար սահմանված արդյունքի չափորոշիչը՝ «վերանորոգվող օբյեկտների ընդհանուր մակերես», որը ըստ հաշվետվության թերակատարվել է որոշ մրցույթներին մասնակից չլինելու պատճառով:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված 2021 թվականի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, տարբերություններ չեն արձանագրվել:

Հաշվեքննությամբ խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ և բացատրություններ չունի:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

Հաշվեքննիչ պալատի անդամ

Աբրամ Բախչագուլյան